4023

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 104 - 25

Նախաձեռնող՝ *«Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ*
ք.Երևան, Գևորգ Վարդանյան փ., 1Ա

Գործունեությունը՝ *Արամուսի բազալտի հանքավայրի «Արմենիուս-2»տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն*
Կոտայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 104 - 25

«07» մայիսի **2025թ.**

Կոտայքի մարզի Արամուսի բազալտի հանքավայրի «Արմենիուս-2» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Ա.Ա.Բ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/ծրագիր
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Արամուս բնակավայր

Ներածական մաս. «Ա.Ա.Բ ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ Արամուսի բազալտների հանքավայրի «Արմենիուս-2» տեղամասում, բազալտի որպես շինարարական հումք դիտարկելու նպատակով՝ ըստ «Քարաբլոկներ բնական քարից՝ երեսապատման իրերի արտադրության համար» ԳՕՍ 9479-2014-ի տեխնիկական պայմանների և ՀՍՏ ԳՕՍ-8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջների:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ կողմից հայցվող տարածքը կազմում է 12.7 հա: Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքը բաղկացած է մոտ 3 տասնյակ գյուղատնտեսական նշանակության հողամասերից, որոնցից մոտ 1.5 հեկտարը համայնքային է, 11.2 հեկտարը՝ մասնավոր սեփականության՝ համաձայն կադաստրային տվյալների:

Ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել բազալտների տեղամասի մանրակրկիտ հետախուզում՝ հումքի որակական հատկությունների պարզաբանման և արդյունաբերական A կարգով պաշարների գնահատման և հաշվարկման նպատակով՝ ելնելով տարածքի ձևի և չափերի առանձնահատկություններից: Տեղամասի ուսումնասիրման հետախուզական ցանցը A կարգի պաշարների համար նախատեսվում է 100-200 մ սահմաններում: Տեղամասի սահմաններում բազալտային հոսքերի հզորությունը, ըստ հարակից տարածքում փորված հորատանցքերի տվյալների, սպասվում է 10-22 մ-ի սահմաններում և, այդ փաստը հաշվի առնելով, նախատեսվում է կատարել հորատման աշխատանքներ: Հորատումը նախատեսվում է իրականացնել սյունակային եղանակով՝ 112-93 մմ տրամագծով կարծր համաձուլվածքի կամ ալմաստե թագիկներով: Ընդամենը նախատեսվում է անցնել 25 հորատանցք՝ 11-25 մ խորություններով՝ ընդհանուր 400 գծամետր երկարությամբ: Հորատումը նախատեսվում է իրականացնել ինքնագնաց հորատման հաստոցի միջոցով, որի տեղադրման համար ճանապարհների և հարթակների կառուցում չի նախատեսվում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին զուգահեռ նախատեսվում է նաև իրականացնել փաստագրման աշխատանքներ՝ 1:100 մասշտաբով:

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման համար նախատեսվում է կատարել տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական հանույթ մոտ 15 հա տարածքի վրա:

Օգտակար հանածոյի նյութական, հատիկային կազմը և տեխնոլոգիական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է հանուկային նմուշառում՝ յուրաքանչյուր հորատանցքից 1-2 նմուշ, ընդամենը 32 նմուշ բազալտների բացված

ամբողջ հզորությամբ՝ 1 նմուշի քաշը կկազմի 10-30կգ: Վերցված բոլոր 32 հանուկային նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների՝ 32 նմուշի ֆիզիկամեխանիկական հատկությունների և 4 նմուշի քիմիական կազմի: 4 նմուշներով նախատեսվում է միներալային կազմի ուսումնասիրում և 5 նմուշով վերստուգիչ անալիզների իրականացում այլ լաբորատորիայում՝ տրամադրելով առաջնային նմուշի կրկնօրինակը: Ընդամենը, վերստուգիչ անալիզները հաշվի առնելով, կկատարվի 37 նմուշի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրում:

Տեղամասի ինժեներաերկրաբանական, լեռնատեխնիկական և ջրաերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների անցման ընթացքում, ինչպես նաև տեղամասի հարևան տարածքների տեղազննում գեոդինամիկ երևույթների առկայության պարզաբանման նպատակով: Նախագծով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու է ապարների ռադիոակտիվության ուսումնասիրություններ ևս:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրենցից ենթադրում են նաև որոշակի քանակությամբ հողային շերտի խախտում, բացահանքից հեռացված մինչև 2 մ հզորության մակաբացման փուխր ապարների և մինչև 1 մ հզորության հողմահարման շերտի (ընդհանուր մոտ 3 մ) զանգվածը ենթակա է հետլիցքի: Բացահանքից ընդհանուր հեռացված և հետլցման ենթակա ապարների ծավալը կկազմի $3մ \times 40մ^2 = 120մ^3$

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքն Արամուս գյուղի ասֆալտապատ ավտոճանապարհին միացնող գրունտային ճանապարհի երկարությունը կազմում է մոտ 1.3 կմ: Ընդամենը մոտ 10 օրվա տևողությամբ դաշտային աշխատանքները կարելի է կազմակերպել խոնավ եղանակին և ավտոտրանսպորտի շարժով փոշի չառաջացնել: Ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքը զբաղեցնում է 12.7 հա մակերես և սահմանափակվում է ստորև ներկայացված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS – 84 համակարգով):

1.	Y=8471782,0949	X=4455552,6220	11.	Y=8471693,0311	X=4455081,2411
2.	Y=8471755,0000,	X=4455692,0000	12.	Y=8471738,3782	X=4455088,0263
3.	Y=8471670,3478	X=4455689,0123	13.	Y=8471742,0609	X=4455068,0531
4.	Y=8471681,0613	X=4455579,3096	14.	Y=8471799,6323	X=4455076,0811
5.	Y=8471764,4503	X=4455515,0431	15.	Y=8471804,7288	X=4455042,2455
6.	Y=8471684,5133	X=4455534,7371	16.	Y=8471864,8039	X=4455054,5795
7.	Y=8471675,3659	X=4455402,3444	17.	Y=8471857,8709	X=4455097,7577
8.	Y=8471661,7937	X=4455314,9420	18.	Y=8471942,1276	X=4455124,2788
9.	Y=8471636,1272	X=4455271,3576	19.	Y=8471863,9457	X=4455566,3073
10.	Y=8471635,2101	X=4455169,5672			

Արամուսի բազալտների Արմենիուս-2 տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում որոշակի ազդեցություններ են դրսևորվելու մթնոլորտի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա: Մեքենաների տեղաշարժի, մակերևութային հետախուզական փորվածքների անցման և հորատանցքերի հորատման ժամանակ տեղի է ունենալու վնասակար գազերի որոշակի արտանետումներ: Փոշեգոյացում կարող է լինել՝ կապված տրանսպորտի շարժի հետ: Ընդհանուր դաշտային աշխատանքները նախատեսվում են մոտ 10 օրվա տևողությամբ, որոնք կարելի է կազմակերպել խոնավ եղանակին՝ փոշեառաջացումից խուսափելու համար: Բուն տեղամասում հորատման ժամանակ գրունտի խոնավությունն ապահովելու պարագայում ևս հնարավոր է խուսափել փոշեառաջացումից:

Ջրային ռեսուրսների աղտոտում չի նախատեսվում, քանի որ տեղամասի տարածքում, ըստ գնահատման հաշվետվության, մակերևութային ջրային օբյեկտները բացակայում են, իսկ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հողերի աղտոտման կանխարգելման, ինչպես նաև լեռնային փորվածքներով խաթարված

տարածքների ռեկուլտիվացման համար անհրաժեշտ է իրականացնել սահմանված միջոցառումները: Փորձնական բացահանքի անցման արդյունքում խախտվելու է տարածքի մակերևութային հողային շերտը: Ընդհանուր մոտ 40 մ^2 մակերեսով բացահանքի անցման ժամանակ այդ տարածքից նախատեսվում է հեռացնել հողաբուսաշերտը (մոտ 10 սմ հզորությամբ), որը կտեղադրվի փորվածքի մի կողմում՝ հանված մակաբացման ապարներից և օգտակար հանածոյից առանձին: Վերջինս կօգտագործվի բացահանքի ռեկուլտիվացման համար: Բացահանքից հեռացված մինչև 2 մ հզորության մակաբացման փուխր ապարների և մինչև 1 մ հզորության հողմահարման շերտի (ընդհանուր մոտ 3մ) զանգվածը ենթակա է հետլիցքի:

Նախագծով նախատեսված է խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման միջոցառումներ՝ բացահանքի լցնում, նույն տեղից հանված հողաբուսային շերտով ծածկում, հարթեցում և ամրացում և կենսաբանական վերականգնման միջոցառումներ, հողային աշխատանքների իրականացումը նախատեսվում է իրականացնել հողի բերրի շերտի հանման նորմերի որոշման, պահպանման, նպատակային և արդյունավետ օգտագործման՝ ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն և 2011թ-ի սեպտեմբերի 8-ի N1396-Ն որոշումներով սահմանված կարգով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
2. տեղամասի մակերեսի հողերի դիտարկում՝ նավթամթերքներով աղտոտվածությունը բացառելու նպատակով՝ տարեկան մեկ անգամ,
3. տեղամասում և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում՝ տարեկան մեկ անգամ,
4. աղմուկի մակարդակի վերահսկողություն՝ տարեկան մեկ անգամ:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Կոտայքի մարզպետի աշխատակազմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

-Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

-Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ստորգետնյա ջրերի (առկայության պարագայում), կենսաբազմազանության մոնիթորինգ և արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

-Ապահովել խախտված տարածքների ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

-Առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջներով:

-Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշման պահանջների համաձայն:
-Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ա.Ա.Բ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Արմենիուս 2» տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աննա Սարգսյան